

## Տ. ԲԱԲԿԵՆ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
(ավազանի անունը՝ Հուսիկ)

Ծնվել է 1957 թ. մարտի 20-ին Մարտունու շրջանի Լիճք գյուղում:

1964-1974 թթ. սովորել է Երևանի թիվ 48 միջնակարգ դպրոցում:

1974-1979 թթ. ուսանել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի Ճարտարապետաշինարարական ֆակուլտետում:

1979-1981 թթ. ծառայել է խորհրդային բանակում որպես սպա:

1981-1984 թթ. աշխատել է «Հայէլեկտրալույս» գործարանում:

1984-1994 թթ.՝ ՆԳՆ շինարարական աշխատանքների ղեկավար:

1994-1999 թթ.՝ «Ջապիկ» մանկապան փոխտնօրեն:

1999-2001 թթ. աշխատել է Շինարարության որակի տեխնիկական վերահսկող:

2000 թվականից՝ «Հուսաբեր» բարեգործական հիմնադրամի նախագահ:

2000-2002 թթ.՝ Հովհաննես Կոզեռնի անվան կրթամշակութային կենտրոնի տնօրեն:

2002-2003 թթ.՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ճարտարապետաշինարարական բաժնի տնօրեն:

2002 թ. մասնակցել է Սանկտ Պետերբուրգի Հոսփիսի ծրագրին:

1997 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002-2004 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2003-2004 թթ.՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Կլոր Սեղանի» «Հաշմանդամ երեխաներ» ծրագրի ղեկավար:

2003 թ. մասնակցել է «Մշակույթի և հուշարձանների պաշտպանության» թրեյնինգին (ԱՄՆ, Բոստոն):

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի երեք որդի: